

Ա.Ս. ԴՈՒՆԿԻՆ


ՊՈԼՏԱՎԱ

ՊԵՏՐՈՍ





Guinness - large
Guinness - small
Guinness - small



А.С.Пушкин

Полтава

ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО

ЕРЕВАН

1937

891.71

7-90

Ա.Ս. Պողոսյան



ՀԱՅԿԵՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 1961 թ.


ՊՈՒՏԱԿԱ

~~487~~
~~A~~
3510



ՊՈՒՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՓՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

10
11
12



ՆՎԻՐՈՒՄՆ

Քեզ — բայց իմ մութ մուսայի յերգը
 Արդյոք հասնո՞ւմ ե ականջիդ,
 Արդյոք սրախ ձգտումը, անհը
 Կհասկանան համեստ հողիդ:

Թե պոետի այս նվիրումը,
 Ինչպես յերբեմն իր սերն եր աջն,
 Չես ընդունի կրկին, և զուր ե,
 Կանցնի դեմիցդ անպատասխան:

Լսի՛ր, սակայն, այն հնչյունները,
 Յերբեմն այնքան մոտ քո հողուն,
 Խորհիր, վոր բաժանման որերը,
 Իմ հեղհեղուկ բախտի գրկում,
 Անապատի տրտում քո տունը,
 Վերջին հնչուն խոսքերը քո
 Իմ միակ զանձն ու սրբությունն ե
 Ու միակ սերն ե իմ հողու:

ՅԵՐԳ. ԱՌԱՋԻՆ

Հարուստ ու մեծ ե կոչուբեյն ¹
 Ունի մարգեր նա անսահման.
 Յեւ արածում են նըրա գեր
 Նըժույգների յերամակներն
 Այնտեղ ազատ, անպահապան:
 Պոլտավի շուրջ ազարակներ ²
 Այգիներով շրջապատված,
 Ունի անչափ նա բարիքներ,
 Ատլաս, արծաթ ու մորթիներ
 Ամբարներում իր փակ և բաց:
 Բայց կոչուբեյն հպարտ ե, լի,
 Վոչ փըրփրաբաշ նըժույգներով,
 Վոչ իր վոսկնով—տուրքով Ղրիմի,
 Վոչ եւ տոնմիկ իր գյուղերով,
 Իր աղջկանով ե գեղաղեմ
 Հըպարտանում ծեր կոչուբեյն: ³

Այն ել ասենք Պոլտավաում
 Մարիին չի հավասարվում
 Իր թովչանքով վոչ մի աղջիկ:
 Նա թարմ ե քանց դարնան ծաղիկ
 Բացված հըսկա կաղնու ստվերում:

Կէ՛ վու՛մ աճող բարդու նման
Մլացիկ ե նա: Ծարժ ու ձևերն—
Ասես կարապն ե սահուն այն
Ջրերում ջինջ ու կուսական,
Կամ յերկչոտ վիթն ե սուբում վեր:
Ճերմակ ե կուրճքը զերթ փըրփուր:
Ու բարձրը, վեհ ճակատի շուրջ
Քոպոպը թուխտ ե 'թուխ' ամրան:
Աչքերում շող կա աստղերից.
Ծուրթը կարմիր վարդի նըման:
Բայց վոչ միայն գեղն ե գերիչ
(Սամրո՞ղ ծաղիկ) մեծ համբավով
Հարգվում ջահել Մարիի մեջ.
Հայտնի չե նա ամենուր՝ մեծ
Համեստությամբ ու իր խելքով:
Գալիս են պերճ փեսացուներ
Ուկրայնայից ու Ռուսչայից.
Սակայն փախչում ե նա վեհեր՝
Պսակից, ինչպես կապանքնից:
Մերժում—բողբ ուզողներին.
Բայց գեամանն ինքն ե ուզարկում
Իր հարսնախոսը նըրա տունս:
Ծեր ե, կըքած ե տարիքով,

Ռազմով, հողատով, աշխատանքով-
Բայց սիրաբը ջերմ եւ եւ կրկին
Տիրում եւ սերը Մազեպին:

Պատանի սիրտն ահնթարթում
Սյրվում, հանգչում եւ Սերն հզոր *հարմ
շն*
Մնցնում, գալիս եւ նորից նոր,
Նոր կիրք եւ միշտ նըրան լափում.
Բայց չեւ աշդքան հըլու—դյուրին,
Վարկենական կըրքի հըրով
Ձի բըռնկվում ծերի հողին՝
Սըդեն սառած տարիներով:
Բյուր կըրքերի բովում ադան՝
Համառ, դանդաղ թրծված եւ նա.
Բայց ուշ կըրակն եւ չի հանգչի
Մինչև վերջին կայծը կյանքի:

Այն վիթը չի փախչում քարայր՝
Լըսելով ճախը ծանր արծվի.
Հանրան եւ սրահում մենակ, մոլար,
Բողում՝ մինչև հարցը լուծվի:

Յեղ վըրդովված ամբողջ հողով

Փալիս ե մայրն ու հուղմունքով
Բըռնում ե ձեռքը, խոսում դողդոջ.
«Անխիղճը, ծերը պատվուրաց:
Այս կանգը ե... Վո՛չ, դեռ չհնք մեռած.
Չի գործի նա վոճիրը վո՛չ:
Նա, վոր անմեղ իր սանիկին
Պիտի լիներ ընկեր ու հայր...
Եյանքի վերջում, Ե, խելագար,
Նրան ուղում ե առնել կի՛ն»:
Մարին ցնցվեց: Իագաղային \

Մի դալիու թյուն տիրեց նըրան,
Ու սառն, ինչպես մեռելի դին, \

Աղջիկն ընկավ ճաղի վըրան:

Ուշքի չեկավ նա, բայց կրկին
Փակեց աչքերն ու արտմագին
Լըռում ե դեռ: Ծեր հայրն ու մայր
Փորձում են սիրաը ամոքել,
Վանել յերկյուղն ու վիշաը դառն
Ու մութ խոհերը փարատել...
Իգնւր: Ամբողջ այդ յերկու որ
Մերթ լուռ լալով, մերթ հեծելով,
Մերժում եր ջուր ու կերակուր,

Ստովերի պէս գունատ, մոլոր,
Յեւ չեր քնում: Իսկ յերբորդ ո՞ր
Նրա սենյակը մընաց թափուր:

Վոչ-վո՞ք գիտեր, ինչպէս և չերք
Փախաւ: Ջրկնորսը այն գիշեր
Ջրու գովոյուն լըսեց միայն,
Կանացի շունչ, կազակի ձայն,
Իսկ առավոտ մարգի մեջ թաց,
Ութ սըմբակի հետք յերևաց:

Վոչ միայն աղվամազն այտի
Ու գանգուրներն յերիտասարդ,
Յերբեմըն ծերն ել ճակատի
Խիստ կնճիռով, մազով արծաթ,
Գեղեցկունո՛ւ մեջ սիրաջեր
Վառում և կըրքահուլոյդ տենչեր:

Շուտով հասաւ Կոչուբեչին
Որհասական այդ լուրն արնոտ.
Նա մոռացաւ պատիւ, ամօթ,
Նետվեց նա գիրկը դիվային:
Ինչ նախատինք: Յեւ հայր ու մայր
Չեն հասկանում այդ լուրը չար:

Այն ժամ միայն ճշմարտութեան
Յերևաց դեմքը սոսկազին:
Այնժամանակ պարզվեց միայն
Ձահեկ մեղսակցուհու հոգին:
Այն ժամ պարզվեց, ինչո՛ւ այնքան
Կապանքներից ընտանեկան
Նա խուսափում եր քրմահաճ
Գաղտնի տանջվում, հոգոց հանում,
Ուղողներին ել՝ աննրված
Լըռությունով պատասխանում.
Ինչո՞ւ յեր նա լուռ, մըտազբաղ,
Լքսում միայն ձեր հեռմանին,
Յերբ վոր հընչում եր յերգ, ծիծաղ,
Ու փըրփըրում թասում գինին.
Ինչո՞ւ նա լոկ յերգում եր այն,
Ինչ վոր Մաղեպն եր հորինել,⁵
Յերբ նա աղքատ եր, փոքր ու դեռ
Հըռչակը չեր ծանոթ նըրան,
Ինչու հոգով վոչ կանացի
Այնքան սիրում եր աչրուծի,
Գափերի հունչը գոռ և հանչ
Ի փառքս մալորոսական
Բոււլավալի ու բունչուկի:⁶

Հարուստ, հրդոր և Կոչուքեյն:
Ունի նա շատ բարեկամներ:
Պատիվն իր դեռ կըլլումնա:
Վտտի կհանի Պոլտավան նա.
Նըրա տան մեջ, հանկարծակի,
Նա, հայրական վըրեժով լի,
Չարագործին կըհանդիպէ,
Յեւ նա կարող և անայլալ
Բազկով շամփրեւ նըրան... Բայց այլ
Թոհեր ունի ծնր Կոչուքեյն:

Ժամանակներն եյին այն խառն,
Յերբ Ռուսյան եր հասակ առնում,
Մաքառումի մեջ առնանում,
Ինչպես Պեսրաւ Մեծի հանճարն:
Փառքի ուաման մեջ նա ուներ
Դաժան վարպետ. նըրան ինչքա՛ն
Հանկարծակի արնոտ դասեր
Տըվեց շվեդն ասպետական:
Բայց փորձութեան բովերում բարկ
Ճակատազրի դարկերի տակ
Ռուսյան կոփվեց: Այգպես ահա
Մուրճն ապակին փշրում է, բայց
Կոփում պողպատը շիկացած:

Պսակլամ ռենայն փառքով՝ անան
Կառլը սահում եր դեպի մահ,
Գրնում եր Մոսկվայի դեմ հին՝
Ռուս ջոկատները սըրբելով,
Ինչպես մըրբիկն ե քշում շողն
Ու թեքում խոտը ճանապարհին:
Այն ուղիով, ուր հեաք թողեց
Վոստիլը նոր և առնացի,
Յերբ անկյունով իր տարվողից
Նահանջն իր՝ այրը որհասի⁷:

Կար խուլ հուզմունք Ուկրայնայում:
Վաղուց եր կայծը հուրհուրում:
Բարեկամներն արնոտ հընի
Պատրաստ եյին պատերազմի,
Անհաշտ, գոռոզ, ձգտում եյին
Քանդել կապերն արգելառիթ,
Յեկ սպասում եյին Կառլին
Հիացմունքով թեթևամիտ:
Հընչում եր Մազեպի չորս կողմ
Ապստամբ կոչը. ժամ ե, ժամ:
Բաց դեռ մնում եր ծերն զգոն՝
Պյոտրի հպատակը հնազանդ:

Առաջվա պես խոժոռ ու խիտ՝
Ուկրա՛յնան եր վարում հանգիստ—
Կարծես անմասն ու անխըռով,
Տարված անհոգ խնճուղքներով:

«Գետմանը—ծեր ե նա, տըկար,
Պընդում ելին պատանիներն.—
Հանգյըրել են տարիքն յերկար
Նըրա նախկին կըրակը ջերմ:
Ինչո՞ւ դողդոջ ու թույլ բազկով
Կըրում ե նա դեռ ըուլավան:
Պետք ե հիմա ռազմով, ազգով
Թնգա՛լ դեռ ատելի Մոսկվան:
Յեթե ծերուկ Գորոշենկոն,⁸
Սամոյլովիչն չերիտասարդ,⁹
Կամ Պալեյը,¹⁰ Գորդեյենկոն¹¹
Մեզ տանեյին ճակատամարտ,
Աչնժամ ոտար ձընհրում այն
Կազակներ չեյին կորչի,
Կազատվեյին գնդերն համայն¹²
Մոլորոսյան մեր հեզ յերկրի»:

Այսպես եր քաջ պատանու թյուռնն

487 A 3510

Այրվում անդուսպ ու բորբոքվում՝
Ծարավ վտանգավոր փորձի,
Մոռանալով հայրենիքի
Գերջալ վիճակը վաղեմի,
Բողոքանի բախտավոր վեճերն
Ու սուրբ ուղիները, դաշնագրերն
Ու փառքն իրենց քաջ պապերի:
Բայց ծերությունն զգուշ քալում
Ու միշտ նայում է կասկածով:
Անկարելին ու կարելին
Նա չի լուծում մի հարվածով:
Ո՞վ կըսուզվի խորքերն անտակ
Սառցով պատած ովկյանոսի:
Ո՞վ սուր մտքով կըթափանցի
Նենգոտ հոգու մինչև հատակն,
Որհասական: Այնտեղ մտքեր,
Այրվող կրքի արգասիքներ,
Մընում են դեռ խոր ընկերմած
Ու վաղեմի, գուցե, տենչեր
Հասունանում են մենակյաց:
Գուցե: Սակայն Մազիպն ինչքան
Խարդախ է, չա՛ր է, թունալից,
Այնքան անհոգ է նա դրսից



Ու վարմունքով պարզ և այնքան:
Ինչպէս գիտե նա ախրաբար
Կարգալ սըրտերն ու գըրավիւլ,
Վարել մտքերը անվըթար
Մարդկանց պաղտնիքը բաց անել
Ինչպիսի կեղծ վստահությամբ,
Ինչքան անհոգ՝ խնճուղքներում,
Ծերերի մոտ, ծեր շաղակրատ,
Անցած որերն և միտ բերում,
Նորերի հետ՝ ազատասեր,
Դժգոհի հետ՝ ընդդեմ կայսեր,
Զրկվածների հետ արտասվում
Ու հիմարի գտնում լիզուն:
Գուցե քըչերը միայն գիտեն,
Վոր անսասան և այդ հոգին
Յեւ անխըտիր զենքերի մեջ,
Յերբ հարկ և վնաս տալ վոսոխին.
Վոր վոչ մի հին վիրավորանք
Զի մոռացել նա իր որում,
Վոր հանցավոր իր յերազանքն
Սրդեն հասնում և շատ հեռուն,
Զունի նա վոչ մի սրբություն,
Զի կատարել նա բարություն,

Նա չի սիրում վռչինչ, ագած՝
Տենչում ե, վորպես ջուր, արյուն,
Ազատությունն արհամարհում,
Վոր հայրենիք ել չունի նա:

Վաղուց, գաղտնի, իր չար հոգում
Ծերն անեղ գավ եր փայփայում:
Բաց մի հայացք վտանգավոր
Թշնամական հայացք մի լսոր
Նըրան շատ լավ եր հասկանում:

Ե՛վոչ, գիշատիչ, հանդուգն գող,—
Կոչուբեյը կրճտում ե չար,—
Յես խընայում եմ տունը քո,
Իմ աղջըկա բանտը լսավար.
Դու չես խանձվի հրդեհում տապ,
Դու չես սատկի մոլեգնաթափ
Կազակի թրով: Վո՛չ, արնախո՛ւմ
Մասկվյան դահիճների ձեռքում,
Արյա՛ն մեջ, փուչ չքմեղանքով,
Ցըցի վըրա, ջողածգանքով,
Դու կանիծես այն որն ու ժամ,
Յերբ կնքեցիր աղջիկս իմ տանն,
Ու այն խնձույքը, ուր, իղճեր,
Լըցրի յես քեզ պատվո գինին.

Յեւ յաչն գիշերը, ծեր ուրուր,
Յերբ դու տարանք իմ աղավինին...»

Կար ժամանակ, յերբ Կոչուբեյն
Ընկեր եր Մազեպին, յեղբայր.
Յերբ նըրանք, աղ ու հաց վորպես,
Սըրտերն ելին բացում իրար:
Նըրանց ձիերն արյան դաշտում
Թըռչում ելին միշտ միասին.
Նըրանք հաճախ ելին խոսում
Մտերմական սիրո մասին—
Կոչուբեյին՝ գետմանը փակ
Բաց եր անում, մասամբ, հատակն
Իր ապստամբ, ազահ հոգու,
Յեւ ալնարկում ապագայի
Ընդվզումներն արնով հըղի
Յեւ դաշինքներն իր ահարկու:
Այդպես եր, Կոչուբեյն հոգով
Նրան նվիրված աչն ժամանակ:
Բալց մոլեգնած դառն վոխով
Նա ալժամ ունի սրտում պապակ՝
Միայն մի տենչ, նա միայն մի
Միտք ե սընում որ ու գիշեր՝

կըկործանվի կամ կըհանի
Վոխն անարգված իրա դատեր:

Բայց չարությունը ձեռներեց,
Նա թագցրել է խոր սրտում:
Անզոր վշտով գիշեր, ցերեկ
Նա դեպ շիրիմ է լող ձգտում:
Մաղեպի դեմ նա քեն չունի.
Աղջիկն է մեղավոր միայն:
Բայց նա աղջկան էլ կըների.
Տիրոջը թող տա պատասխան—
Իր գերդաստանն անպատվելով՝
Մոռանալով չերկինք, որենք:

Այն ինչ, արծվի սուր հայացքով,
Իր շրջանում, գիշեր ցերեկ,
Փընտռում է նա՝ կողմնակիցներ
Քաջ անկաշառ և աներեր.
Կընոջը վողջը խոստովանեց.¹³
Վաղուց նա խոր լռության մեջ
Ահեղ նյութում է մատնություն,
Յեւ կանացի վըրեժով լի,
Կինն անհամբեր, անլըռելի,

Դրբդում ե գաղազած մարդուն:
Նա լուռ գիշեր քընի պահին,
Վորպես վոգի գիշերալին,
Նըրան վըրիժ ե փըսփըսում
Յեվ պարսավում ե արտասվում
Յեվ պահանջում յերդում անեղծ—
Յեվ Կոշուբեյն անեղ՝ յերգվեց:

Կըշըուված ե հարվածը: Արդ՝
Իսկրայի^{1A} հետ ե Կոշուբեյն:
Սորհում են յերկուսով. «Արդեն
Պատրաստ ե վոսոխին թակարդ:
Բայց ո՞վ, արդյոք, խանդավառված
Դեպի բարիքն ընդհանրական
Չարագործի մասին գրված
Այդ մատնագիրն որհասական
Կհասցնի անվախ՝ նըրան
Պյոտրին անեղ ու կանխակարծ»:

Կազակներն մեջ Պոլտավյան,
Մերժված անբախտ այդ աղջկանից,
Սիրում եր մեկը գեռ նըրան
Սիրով անմար ե անձկալից:

Նա յերեկո և առավոտ
Իր մայր գետի չեղերքի մոտ,
Կեռասենու շրվաքի տակ,
Մարիին շատ և ըսպասել,
Տանջվել անհույս ու դառնացել,
Ու լող տեսքովն առել փափաք:
Անհույս սիրով և սիրել նա,
Զի ձանձրացրել առաջարկով.
Նա մերժումին չէր դիմանա:
Յերբ այցելում էյին խմբով
Փեսացուները, նա ջոկվում
Ու հեռանում եր վորը, վըհատ:
Իսկ յերբ հանկարծ Պոլտավայում
Մարիի խաղքն յեկավ ի հայտ,
Յերբ բաճբասանքը Մարիին
Ծաղրեց անգութ ու աչպանեց,
Մարին այդտեղ ել պահպանեց
Նըրա հանդեպ իր թովքը հին:
Բաց, յերբ, թեկուզ պատահարար,
Մեկը հիշում եր Մաղեպին,
Դեղնում և նա վշտով անճառ՝
Հայացքն իջեցնելով գետին:

Ո՞վ ե լուսնով, աստղերի տակ
Սուրում այսքան ուշ ժամանակ,
Այն ո՞ւմ նըժուլդն ե անդադար
Այդպես չափում ըստեպն անծայր:

Կազակն հյուսիս ե միշտ գընում,
Կազակը չի հանգըստանում
Վոչ կաղնուտում, դաշտում լըռին,
Վոչ ել դժվար անցման պահին:

Թուրն ե փայլում դերթ ապակին,
Պարկը դնգում կըռան տակին,
Սուրում ե ձին անգայթ հեռուն,
Բաշը կայտառ թափահարում:

Սուրհանդակին պետք կըգա փող
Կըտրիճի թուրն ե հույսի շող,
Կայտառ նըժուլդն ել հույս ե, կյանք,
Բայց այդ պահին գլխարկն ե թանկ:
Գլխարկի տեղ պատրաստ ե տալ
Ձին, փողն ու թուրն ապակեփայլ,
Բայց նա գլխարկը չի գիճի
Թեկուղ վալրագ կուլի միջին:
Ի՞նչ ե—գլխարկ մի հասարակ:

Վնչ—կա աչնտեղ կարված՝ նամակ,
Թուղթ հետմանի դեմ չարածին
Կոչուբեյից Պետրոս Մեծին:

Այնինչ, ամպրոպը չզգալով,
Վոչ մի բանից չսարսելով,
Մազեպը դավն ե պատրաստում:
Յեկ լիազոր ճիղվիթը¹⁵ նրան,
Տալով գահի խախուտ խոստում,
Հիմք ե դնում խռովության:
Նըրանք մըթան մեջ, յերկու գող,
Բանակցում են՝ սըրտները դող,
Դավն իրար մեջ կըշռում, կարգում,
Ունիվերսալ¹⁶ գըրում այնքան,
Արքայի գլուխը սակարկում
Ու յերդումները վաստակահան:
Պալատ մտավ խորհրդավոր
Այնորվանից ինչ վոր աղքատ,
Նրան՝ Որլիկը¹⁷ կեղծավոր,
Գետմանների միջնորդը նենգ,
Տանում, բերում ե աննըկատ:
Ամեն տեղ սըրըսկում են թուլն
Իր ծառաները գաղտնահած,

Բուլլավիճնի¹⁸ հետ՝ դազազած
 Դոնի կազակներին դըրդում,
 Ու զարթեցնում այնտեղ վայրի
 Կիրքը խիզախ հորդաների,
 Դնեպրի շեմքից այնկողմ, այդժամ,
 Ահաբեկում են կատաղի
 Ամբոխը հոծ կազակների
 Ընդդեմ Պյոտրի իշխանության:
 Մազեպն հակում ե անդադար,
 Յերկրից—յերկիր գրում. արդեն
 Հանել ե նա խարդախաբար
 Բախչիսարայը Մոսկվայի դեմ:
 Նըբան լքում ե վարշավում
 Լեն թագավորն, Ոչակովում,
 Բերդի պատերից ներս—փաշան,
 Բանակում կառլն ու ցարն: Անքուն,
 Անխոնջ ե այդ հողին դաժան.
 Նա խոկալով խոկում ե հար
 Դիպունկ նյութիկ հարվածը, խոբ,
 Ջի թուլանում այդ կամքը չար,
 Ջի հանդչում կիրքը հանցավոր:

Բայց նա ինչպե՞ս ցնցվեց, դողաց,

Յերբ վոր հանկարծ գլխին շողաց
Ամպրոպն անեղ, յերբ վոր նըբան,
Ռուսաստանի վոսոխին այն,
Ռուս իշխաններն՝¹⁹ ուղարկեցին
Թուղթը գրված Պոլտավայում
Յեղ, փոխանակ սպառնալու,
Փաղաքշանքներ շըռայլեցին
Նըբան, իբրև անմեղ զոհին:
Պատերազմի հոգսով տարված,
Կեղծ սաղբանքի դեմ վրդովված,
Ու չանսալով մատնագըրին,
Ինքը արքան եր հուզային
Մըխիթարում, տալիս խոստում
Սաստեղ չարիքն—արմատախիլ,
Պատժով անեղ ու շըռնդուն:

Մաղեպը, կեղծ իր վշտի մեջ,
Հըլու ձայնով ցարին դիմեց.
«Պարզ ե տիրոջն ու աշխարհին,
Նա, խեղճ հետման, քըսան տարի
Ցարին անկեղծ ե ծառայել
Ու բարձրացել ե սոռվել
Նըբա անձառ վողորմությամբ...
Ո՛ր, չարություն անմիտ և կույր...»

Արդեն հասած շիրիմի դուռ՝
 նա մի՞թե դավաճանության
 Ուսմունքն այսոր պիտի սկսեր
 Ու փութքն անբիծ նըսեմացներ:
 Մի՞թե նա չե՞ր, վոր զաչրուլթով
 Մերժեց ոգնել Ստանխալվին,²⁰
 Պատկառանքով հավատաբիմ
 Մերժեց նա թագն ուկրայնական,
 Ու դաշնագիր, գաղտնիք այնքան,
 Պարտքին գիտակ՝ հըղեց ցարին:
 նա չե՞ր, վոր խուլ մընաց խանի²¹,
 Ստամբուլյան գոռ Սուլթանի
 Սադրանքներին: Պատրաստ ե նա,
 Խելքով, սըրով միշտ կըգնա
 Ընդդեմ ցարի վոսոխներին,
 Զի խնայում է իրանդ ու կյանք,
 Յեվ հանդգնել ե մի չարկամ
 Ցե՛խ նետել նրան, ալևորին:
 Յեվ ո՞վ ե, Իսկրան, Կոչուբեյն,
 Իր ընկերները հընագույն...»
 Յեվ արցունքով արյունախում,
 Հանդգնությամբ իր սառնասիրտ,
 Նըրանց համար դահիճն այդ բիրտ

Մահապատիժ ե պահանջում. 22

Ո՞ւմը պատժել... ծերուկ դաժան:
Վորի աղջիկն ե քո գրկում:
Բայց նա խեղդում ե սառնարյուն
Սըրտի մրմունջը թմրածայն:
Խոսում ե նա, ինչո՞ւ հիմարն
Անհավասար վեճ ե սկսել.
Ինքն ե գոռոզ, ըմբոստասեր,
Ինքն ե սրում սակը իր համար,
Ո՞ւր ե վազում խուփ աչքերով:
Ի՞նչ հիմունքով ու հույսերով:
Գուցե... Բայց սերը աղջըկա
Հոր կյանքը չի փըրկի: Պիտի
Սիրողը գետմանին զիջի,
Թե չե արյունն ինձնից կերթա»:

Մարի, Մարի, թշվառ Մարի,
Գեղ չերկասյան աղջիկներին
Գիտե՞ս, դու քո չքնաղ ծոցում
Ինչպիսի ոճ ես սընուցում:
Այդ ի՞նչ ուժով անմեկնելի
Քեզ կախարդել ե, քեզ գերել

Նըրա հոգին: պիղծ ու մոլի:
Դու ո՞ւմն ես քեզ զոհարերել:
Այն պանդուրները ալևոր,
Յեվ կնճիւնները նըրա խոր,
Փոս ու փայլուն նըրա աչքերն
Ու նենգավոր խոսքերը ջերմ՝
Քեզ համար թանգ են ամենից,
Դու մոռացար քո մորն անգամ,
Վեր դասեցիր հոր ոջախից
Առադաստը գայթակղության:
Հըրաշալի քը աչքերով
Քեզ կախարդել ե ծերն անշեջ,
Նա իր խողաղ գրույցներով
Քընացրել ե խիղճը քո մեջ:
Դու քո հայացքը շըլացած
Նըրան հառած խոնարհ ու հեղ
Փայփայում ես նըրան սրտանց—
Յեվ հաճելի չե խողքըդ քեզ,
Դու խենթ, հպարտ հիացումով՝
Անբիծ ես համարում նըրան—
Դու պատկառանքը թուլչական
Կորցրիր անդարձ քո անկումով:

Բայց ի՞նչ և Մարիին ամոթ
Ու նախատինք, թուքն աշխարհի,
Յերբ վոր, զըլուխն և գոռ ծերի
Թեքվում նըրա ծնկների մոտ,
Յերբ մոռացած գետմանն այդպես
Կչանքի աղմուկն ու աշխատանք,
Խոհերն անեղ ու գաղտնափակ
Բացում և աղջըկան այդ հեզ:
Զի ավստոսում որերը կույս,
Միայն, մեկ-մեկ, տրտում մի հույզ
Հոգին ծածկում և ամպի պես.
Պատկերացնում և հորն ու մոր
Հուսալքված ու վշաակեզ,
Տեանում և նա աչքում արցունք՝
Նըրանց մենակ, վորդիազուրկ
Տերության մեջ, և նա ասես
Լըսում և նրանց յերգերը կեզ:
Ո, չեթե նա տեղյակ լիներ,
Ինչ վոր գիտե Ուկրայնան վողջ
Բայց նըրանից պահված և դեռ
Գաղտնիքը այն յեղեւնագործ:

Մաղեպան մռայլ եւ իր հոգին
 Հուզված ե ժանտ յերազներով:
 Մարին քնքուլը իր աչքերով
 Նայում ե հեզ — իր ծերուկին:
 Նըրա ծնկները գրկելով՝
 Ջեղում ե սերն իր անդադար:
 Իղճը թեկուզ նըրա սիրով
 Չեն փարատվում խոհերը չար:
 Նա չի լըսում հեզ աղջըկան,
 Ցած ե նայում նա սառնագին,
 Նըրա քնքուլը նախատինքին
 Լոկ լըռությունն ե սլատասխան:
 Մարին խոցվում ե, դարմանում,
 Նա շնչասպառ վեր ե կենում,
 Խոսում ցասկոտ ու վճռական:

«Լսիր, գետման, քեզ համար չես
 Կյանքում ամեն ինչ մոռացա:
 Միրելով մի անգամ հավերժ՝
 Միայն քո սերն չես ունեցա
 Աչքիս առաջ: Նըրա համար

Խորտակեցի յես բախտս վառ,
Բայց չեմ ցավում վոչինչի չես—
Հիշիր. յերբ այն անեղ գիշեր
Լըռության մեջ հանձնվեցի քեզ,
Դու յերգվեցիր ինձ անհուն սեր,
Ինչո՞ւ, ուրեմըն, չես սիրում:

ՄԱԶԵՊԱ.

Դու անարդար ես, սիրելիս,
Հեռու կաց խենթ ցընորքներից,
Այդ անխմաստ կասկածներում
Դու սիրաբղ գուր կխորտակես.
Ո վոչ, հոգին քո բոցակեզ
Հուզում ե կիրքը կույր, մոլի:
Մարի, գիտցիր, սիրում եմ քեզ
Փառքից, դահից ել ավելի:

ՄԱՐԻԱ.

Վոչ. խորամանկ ես դու դեպ ինձ:
Վաղճուց եյինք մենք անբաժան:
Այսոր փախչում ես իմ սերից,
Չանձրույթ ե պատճառում քեզ այն:
Պետերի հետ ես վողջ որ դու,

Խնճույք, մեկնում—իսկ յես չըկամ,
Աղքատն ե միշտ քեզ հետ նստում
Ամբողջ գիշեր, ճիզվիթը կամ,
Յեզ կամ մենակ ես լուսացնում:
Դիպչում ե սերըս հեզ ու վորբ
Դաժանությանըդ սառցապատ:
Խըմել ես դու կենացն ինչ վոր
Դու՛սկայայի: Նորույթ ե այդ:
Ո՞վ ե այդ Դու՛սկայան:

ՄԱԶԵՊԱ.

Յեզ դու

Խանդոտ: Յեզ յես, այս տարիքում,
Պիտի փնտռեմ գոռոզ վողջճւյնն
Ինքնահավան գեղեցկուհու:
Կարո՞ղ եմ յես ծերուկըս խիստ,
Անդործ տըղի պես հառաչել,
Ծանր կապանք առնել վոտքիս,
Ու կեղծությամբ կանանց դյուլթել:

ՄԱՐԻԱ.

Վնչ, ըացատրիր առանց շեղման
Յեզ պարզ, ուղիղ պատասխանիր:

ՄԱԶԵՊԱ

Թանգ ե հանդիսող հողեկան,
Մարի, ուրեմն այսպես, լսիր:

Մի գործ ենք մենք նյութել վաղուց.
Մեզ մոտ չեռում ե այսոր այն:
Ժամանակներ են ըարեհույս.
Ու մոտ ե ժամն անեղ ըախման:
Մենք անաղատ ե առանց փառք,
Քանի ծովենք խոնաբհադին
Վարչավայի հովանու տակ
Ու Մոսկովյան ինքնակալին:
Ուկրայնային ժամ ե արդեն
Անկախ մի կայսրություն դառնալ.
Պարզում եմ չես Պեսոսի դեմ
Ազատության դրոշակըն ալ:
Պատրաստ ե վողջը, դաշնագիր
Ունեն ինձ հետ յերկու արքա.
Շուտով շքիոթ աղաղակի
Ու վեճերի մեջ մարտական
Կըրարձրանամ գուցե չես դա՛ն:
Յե՛վ հուսալի չեն ընկերներս.
Իշխանուհի Դու՛ լսկայան,

Ճիգվիթն ու այս աղքատն, ահա,
Կըտանեն գործը մինչև վերջ:
Արքաներից նամակ, պատվեր
Նրանք են ինձ բերում, տանում:
Ահա քեզ մեծ խոստովանանք:
Գահ ես: Կասկածը քո անհագ՝
Ցըրվեց արդյոք:

ՄԱՐԻԱ

Ո, թանկագին,
Կդառնաս ցար դու աշխարհին
Քո հարազատ: Վայել է թագն
Ալիքներին:

ՄԱԶԵՊԱ

Կաց, վաղ է դեռ,
Դեռ կճայթի մըրիկը բարկ:
Ով գիտե, ի՞նչ է սպասում մեզ:

ՄԱՐԻԱ

Քեզ հետ չունեմ յես վոչ մի ահ —
Հըզոր ես դու: Գիտեմ, ո՞ր, քեզ
Գահն է սպասում:

ՄԱԶԵՊԱ.

Իսկ յեթե մահ...

ՄԱՐԻԱ.

Յես ել քեզ հետ դեպ մահ այնժամ.
Մի՞թե կապրեմ չես առանց քեզ,
Վոչ, դու ունես գահի նըշան:

ՄԱԶԵՊԱ.

Սիրձամ ես ինձ:

ՄԱՐԻԱ.

Սիրձամ եմ, Յես:

ՄԱԶԵՊԱ.

Քեզ թանգ ե հմյրըդ ավելի,
Թե ամուսինըդ:

ՄԱՐԻԱ.

Սիրելի,

Ի՞նչ հարց ե այդ, Դա ինձ մատնեց
Զուր տագնապի: Ճգնում եմ հար,
Վոր մոռանամ յես հայր ու մայր:

Նրանց յես խաղք արի. դուչե
(Զարհուրելի ի՜նչ գառանցանք)
Ինձ անիծել և հայրըս բարկ,
Յեղ ռւմ համար:

ՄԱԶԵՊԱ.

Յես թանգ եմ քեզ
Հորից ուրեմըն: Լճու ես...

ՄԱՐԻԱ.

Տէր:

ՄԱԶԵՊԱ.

Պատասխանիր:

ՄԱՐԻԱ.

Դու ինքդ ասա:

ՄԱԶԵՊԱ.

Ասենք թե բանն աջնտեղ հասավ,
Վոր պիտ մեռնի կամ նա, կամ յես,
Ու դատաստանն ել քո ձեռին,
Դու կղոհես մեզնից վորի՞ն,

Վորին հովով կպաշտպանես:

ՄԱՐԻԱ

Ախ բնով ե, սիրտըս մի հանիր:
Դու, գայթակղիչ:

ՄԱԶԵՊԱ

Պատասխանիր:

ՄԱՐԻԱ

Գունատ ես դու, խոսքըդ դաժան...
Մի բարկանա: Յես ամեն բան
Պատրաստ եմ քեզ գոհել: Սակայն
Սարսափ ե միտքն այդ խոսքերի:
Հերիք ե:

ՄԱԶԵՊԱ

Բայց հիշիր, Մարի,
Ինչ ասացիր ինձ այս վայրկյան:

Լուռ ե գիշերն ուկրայնական:
Յերկիրնքը ջինջ ե: Շողշողուն:
Զի ուզում ողն իր նինջն անգամ
Վանել: Հաղիվ ե դողդողում

Բարդիների տերևն արծաթ:
Վերից լուսինը մեղմածաթ
Շողում ե՛ Բելա ցերկովին,
Պարտեզներին գետմանական
Ու վողողում դղյակը հին:
Յեվ լճու ե, լճու ե չորս բոլոր.
Բայց դղյակում շրվոթ, հուզում:
Զնդաններից մեկում, մոլոր,
Խորունկ ու ծանրը խոկանքում,
Լուսամուտի առաջ նըստած,
Կոչուրեյը, շղթան վոտքին,
Մըռայլ նայում ե յերկընքին:

Վաղը պատիժն ե: Բայց անան
Դիմավորում ե մահվան նա:
Նա իր կյանքին չի ամսոսում:
Մահն ի՞նչ ե վոր, ցանկալի քուն:
Կերթա շիրիմ նա արնոտված:
Հաղթում ե նինջը: Տե՛ր աստված.
Չարագործի վոտքերի տակ,
Ընկնես անդոր, բերանդ փակ,
Ինչպես անբան մի անասուն,
Ցարն ինքն իրեն ձեռքովը քեղ՝

Տա վոխերիմ իր թշնամուն,
Վոր դու տանջվիս և անարգվես,
Կորցընես կյանք, պատիվ, անուն,
Տանես քեզ հետ կառափնասյուն
Ընկերներին, դագաղի մոտ
Լըսես նըրանց նըզովքն արնոտ,
Անձեղ պառկես կացինի տակ,
Ու տեսնես դեմըդ սանձարձակ,
Ծաղրող հայացքը թըշնամուդ,
Նետվես մահվան անդունդը մութ՝
Չավանդելով և վոչ վոքի
Վըրեժը խոր քս վոսոխի

Յեվ նա Պուտավան իր հիշեց,
Յեվ ընտանիք և բարեկամ,
Անցած որերի փառքը մեծ,
Հիշեց յերգերն իր աղջկա,
Յեվ տունը հին, ուր նա ծնվել,
Յեվ այն, ինչով հրճվել կյանքում
Յեվ այժմ կամավոր թողել,
Ինչհետև —

Սիրել եր ջանք ու խաղաղ քուն
Բաց բանալին ժանգոտ

Զնգում ե կողպեքում—և նա
Սորհում ե սթափովելով. ահա,
Արնաշաղախ իմ ճամփի մոտ
Իմ ուղեցույցը խաչակիր,
Հըզոր լուծիչը մեղքերի,
Բըժիշկն հոգու վերքի, ծառան
Ի մեղ խաչված Քրիստոսի.
Նա ինձ բերում ե սըրբադան
Մարմին, արյուն: Թող ամբանամ,
Մահվան դիմեմ թող համարձակ
Ու մտնեմ այլ, անմահ մի կյանք:

Ու մորմոքով խորունկ՝ սրտի
Պատրաստ ե նա, խեղճ կոչուբեյն,
Զեղել թախիժն իր աղերսի
Ամենազոր անհունի դեմ:
Բայց միանձնի փոխարեն նա
Ուրիշ մի հյուր տեսավ հիմա.
Տեսավ նա Ո՛րլիկին մովի:
Յեվ դառնորեն, զզվանքով լի,
Հարցնում ե նահատակը ծեր.
«Այստեղ ես դու, մարդ ժանտագին,
Ինչո՞ւ գիշերն իմ այս վերջին

Մաղեպն ելի խոռվում ե դեռ:

ՈՐԼԻԿ

Հարցաքննում ե դեռ. խոսիր:

ԿՈԶՈՒԲԵՅ

Արդեն խոսել եմ, հեռացիր,
Ինձ թող մենակ:

ՈՐԼԻԿ

Գեամանը դեռ.

Ուզում ե դադանիքներ:

ԿՈԶՈՒԲԵՅ

Բայց ի՞նչ:

Վաղուց ասել եմ ամեն ինչ—

Ձեր պահանջով: Իմ ցույմունքներն

Ամենն ել կեղծ են: Նենդամիտ,

Դավիչ եմ յես: Նա՛ ճշմարիտ,

Ել ի՞նչ:

ՈՐԼԻԿ

Վաղուց ե մեզ հայտնի,

Վոր դու հարուստ եյիր անհուն,
 Վոր դու ունես Դիկանկայում²³
 Անթիվ գանձեր պահած դադտնի:
 Դու, անկասկած, կգլխատվես,
 Քո ունեցւածքն ամբողջապես
 Կանցնի գանձարկղը ռազմական—
 Որենքն այդպես ե: Յես այս ժամ,
 Վերջին նըշում եմ պարտքդ. բաց.
 Ո՛ւր են գանձերդ թագցըրած:

ԿՈՉՈՒԲԵՅ

Չեք սըխալված. յես այս յերկրում
 Յերեք գանձով եյի բերկրում:
 Առաջին գանձը՝ պատիվս եր այն,
 Վոր կտտանքներն ինձնից առան,
 Յերկրորդ իմ գանձն՝ անդարձ կորած՝
 Պատիվն եր իմ դըստեր սիրած:
 Նըրա համար գիշեր ցերեկ—
 Դողում եյի յես սրտացավ.
 Մազեպն այդ գանձը գողացավ:
 Բայց յերրորդ գանձը պահեցի,
 Գանձն իմ՝ վրեժը սրբազան:
 Աստըծուն եմ տանում յես այն:

ՈՐԼԻԿ

Թող զառանցանքըդ, ձերունի.
Այսոր, գեթ, թողնելով յերկիր,
Դու լըջամիտ յեղիր և խոր:
Կատակելու ժամ չե՛ս Խոսիր,
Յեթե կատանք չես ուզում նոր.
Ու՞ր են փողերը:

ԿՈՉՈՒԲԵՅ

Չար ստրուկ,
Վերջ կա՞ն արդյոք այդ անհեթեթ
Հարցերին: Կանց, մտնեմ դադադ,
Այնժամ գընա Մաղեպի հետ
Չեր մատներով արնաշաղախ
Իմ ունեցվածքը հաշվելու,
Նըկուղները փորփըրելու,
Այրելու տունն, այգին խաղաղ:
Տարեք ձեզ հետ իմ աղջըկան,
Նա ինքը վողջը ձեզ կուսի,
Տեղն ինքը ցույց կտա գանձի.
Այժմ ասածու սիրուն, սակայն,
Խնդրում եմ՝ ինձ թողեք հանգիստ:

ՈՐԼԻԿ

Ու՞ր են փողերը թապցըրած:
 Չե՞ս: Ու՞ր են քո փողերը, բնց-
 վախեցիր վատ հետեւմանքից:
 Խորհիր, ասա մեզ տեղը: Ի՞նչ
 էր սո՞ւմ ես: Նու— կատանք: Գահի՛ճ, 24
 Յեկավ դահի՛ճը...

Ո, դիշեր

Տանջանքների: Բայց ո՞ւր ե նա:
 Ու՞ր ե հեռմանը չարազործ:
 Ու՞ր ե ծածկել ո՞ճն իր անարդ
 Խըղճի խայթերը չարախոց:
 Թմրադեղված սիրով նենդոտ,
 Անգիտությամբ դեռ յերջանիկ
 Աղջկա սրահում, յեյ խաասարդ
 Իր սանուհու անկողնու մոտ
 Նստած ե լուռ, մըռայլ ու մութ
 Մաղեպը խոնարհված գլխով:
 Հողով անցնում ե հապար խոհ,
 Մեկը մյուսից դըժնի՛, դըժնի՛,
 «Խենթ կոչուբեյ—նա կըմեռնի,
 Նա փրկություն չունի» վարքան

Վոր նըստատակը դետմանի
 Մոտ ե, աչնքան նա անոասան
 Իշխանությամբ ոժտվի սլիտի,
 Այնքան իր դեմ ցած սլիտ իջնի
 Վոսոխը: Վոչ մի փրկություն.
 Մասնիչն ու իր ընկերն իսկույն
 Պիտի մեռնեն»: Սակաչն հառած
 Մազկալը դեմքը անկողնուն՝
 Խոկում ե ծանրը. «Տեր աստված.
 Ի՞նչ կըլինի նըրան, յերբ նա
 Կըլսի լուրն որհասական:
 Հանգիտտ ե նա մինչև այսժամ —
 Սակաչն դադտնիքը չի մընա—
 Յերկար պահված: Առավոտյան
 Սակրը կիջնի, կըդըղըրդա
 Ուկրայնան վողջ: Յերկիրն համայն
 Կըձայնակցի շուրջը նըրա...
 Տեսնում եմ, ախ. թե բախտն անհազ
 Տըվել ե քեզ կյանքի հույզեր,
 Ամպրոտն ուրեմըն, տար մենակ,
 Մի ունենա դու կին ու սեր:
 Յեվ չեն լծվի նույն սալակին
 Նըժույգն ու սառսըռուն այժյամ:

Յես մոռացա ինձ. դառնագին
Տալիս եմ տուրքը խենթության...
Ինչ վոր թանգ եր, ինչ վոր անգին,
Ինչ վոր թովք եր տալիս կյանքին,
Բերավ ինձ խեղճն իբրև նըվեր,
Ինձ, ծերուկիս մըռայլ,—և ի՞նչ.
Ինչ վիշտ եմ յես նըրան տըվելը:
Յեվ նա հայտում ե վերըստին.
Ինչ քաղցըր, մեղմ ե անկողնում
Անդորըր պատանեկության:
Յեվ քունը յերջանիկ՝ նրան
Ինչքան քնքո՛ւյշ ե փայփայտում:
Շուրթը բացվեց. խըռովք չունի
Շունչը նրա ջահել կրծքի:
Իսկ վանդը, վանդը... ցնցվելով
Մազեպը դեմքը դարձընում,
Յեխում ե լուռ ու դուրս գալիս
Ամայացած այգին իջնում:

Լուռ ե գիշերն ուկրայնական,
Յերկինքը ջինջ ե: Շողշողուն:
Չի ուզում ողն իր նինջն անգամ
Վանել: Հազիվ ե դողդոջում

Բարգիւների տերևն արծաթ:
 Բայց Մաղեպի հողու մեջ ժանտ
 Մուլթ են խոհերն ոտարտաի.
 Փայլուն աստղերը յերկնքի,
 Վորպես աչքեր մեղադրական
 Նայում են, հեզնորեն, նըրան,
 Յեւ ըբարգիւները խիտ շարքով,
 Գլուխները մեղմ որորելով,
 Լուռ փըսփըսում են վորպես խող
 Դատավորներ: Խեղդուկ ե գոլ
 Ամառնային գիշերը մուլթ,
 Ինչպես զընդան անլուսամուտ:

Յեւ... թույլ մի ճիչ... Նվաղ մի հեծ
 Նա, գնացե դղյակից լըսեց:
 Արդյոք մըաքի ցընձըք եր աչք,
 Գաղտնի կնձ, բուի կըռի՛նչ,
 Կտտանքի հնձ, թե ալ մի հինչ—
 Բայց միայն եր հուզմունքը վատ
 Ծերն անկարող յեղավ վանել
 Յեւ ալ գոչով պատասխանեց
 Այդ նվոցին—այն գոչումով,
 Վորով յերբեմըն նա գի ուլ,

Ռազմաճակատն եր խըլացնում,
Յերբ Զարեղայի, Գամալեյի,
Նըրն հետ... այդ կոչուրեյի—
Թըռչում եր նա ռազմի բոցում:

Ծիրանի այգը մատն ահա
Պարզեց պաշտոն չերկնի վըրա:
Փայլեց բըլուր, հովիտ և արա,
Յեվ կատարներն անտառների,
Յեվ գետն արծաթ, կոհակալից:
Հնչեց աղմուկն այգի զըվարթ
Յեվ արթնացավ մարդը քնից:

Մարին անսւշ ե գեռ շընչում
Ու մեղմաթև նինջի զըրկում
Լըսում ե, մեկը ներս յեկավ
Ու մեղմ դիպավ նըրա վոտքին:
Նա արթնացավ—սակայն կրկին
Փակեց աչքերը՝ ժպտալով՝
Առավոտյան լույսի փայլից.
Մեկնեց թևերն ու շընջաց
Նա նվաղուն, գորովալից.
«Մազեղա...»: Բայց ուրիշ մի ձայն

Պատասխանեց... ո, տե՛ր աստված:
Ճընցվեց Մարին... և ի՞նչ, նըրան
Իր մայրն ե մոտենու՞մ...

ՄԱՅՐ

Լճու կաց.

Մեզ մի սպանի, յես գիշերով
Այստեղ անցա գաղտագողի՝
Արտասովալի լող մի խնդրով:
Այսոր պատիժն ե: Դնւ ելի
Մեղմես գուցե նըրանց մոլի
Կիրքը: Փրկիր քո հորը:

ԴՈՒՄՏՐ (Սարսափահար)

Ի՞նչ հայր

Յե՛վ ի՞նչ պատիժ:

ՄԱՅՐ

Դու չըգիտե՞ս

Մինչ այժմ... Վոչ, դու վանքում չես,
Այլ՝ դղյակում. տեսնում ես բիրտ
Գետմանի ույժն՝ ինչպես անսիրտ
Պատժում ե իր վոսոխներին,
Ինչքան մոտիկ ե նա ցարին —

Բայց յես տեսնում եմ. վըշտահար
 Ծընողներիդ մերժում ես դու
 Մազեպայի սիրո համար:
 Քընած ես դու, յերբ նըրանք Հար
 Մի դատաստան են պատրաստում,
 Կարդում վըճիւր մոլեգին,
 Հորըդ համար սըրում կացին—
 Տեսնում եմ. խորթ ենք մենք իրար...
 Մարի, աղջիկըս, մի լինի քար,
 Վազիր, նըրա վոտքերն ընկիր,
 Հրեշտակ յեղիր, հորըդ փրկիր,
 Քո հացաքով դու կըկապես
 Չարագործի ձեռքը դադիր,
 Կըհեռացնես կացինը: Վազիր,
 Պահանջիր—չի մերժի նա քեզ,
 Դու նրա սիրուն թողիր պատիվ,
 Ծնող, աստված:

ԴՈՒՍՏՐ

Այս ձևը եմ յես:
 Հայրըս... Մազեպան... գլխատում—
 Այստեղ, ինձ մոտ, այս դղյակում,
 Մայրըս աղերսելու յեկած—

Կոչուբեյն ե պառկում կոճղին,
Յեւ լուռ ե, լուռ ամբոխն անով
Ինչպես դագաղ: Փայլեց կացինն
Ու դեն թըռավ դլուխն անա:
Տընքաց վողջ դաշտը: Մյուսն իսկուչն
Թըռավ նույնպես ալընթարթում:
Արյամբ ներկվեց խոտը խաղաղ—
Յեւ չար դահիճը հրճվանքով
Մաղափնջերը ձիգ ձեռքով
Բըռնեց ու կառափները զույգ
Ամբոխի վրա ցնցեց հատուկ:

Մահապատիժը կատարվեց:
Ամբոխն անհող ցրվում ե տուն
Յեւ ամեն մեկն արդեն անվերջ
Իր բանն ու գործն ե մըտամըտում:
Դաշտը, քիչ — քիչ, ամայացավ,
Մինչդեռ ճամփով փոշեթաթավ
Յերկու կանաչք եյին վազում,
Տանջված, փոշոտ և ուժասպառ:
Շտապում եյին գըլխատման վայր
Նըրանք՝ զարհուրանքով լեցուն:
«Նլ ուշ ե» . — մատն այնկողմ մեկնած,

ԴՈՒՍՏՐ

Աստվանձ,

Աստվանձ, այսոր:—Թշվանն իմ հայր:
Յեզ նա մահճին ընկավ, մընաց,
Ինչպիս մեռելը դալկահար:

Խայտարղիտում են գըղակներ:
Տեգերն արևի տակ շողում:
Թնդում են թմբուկներ, դափեր:
Թըռչում և դորքն գետմանական, ²⁵
Հավասարվում են շարքերում
Գնդերն: Ամբոխն և խլտ չեռում:
Սըրտերն են թըփրտում: Ճամփան
Ոճի դալար պոչի նըման
Շարժվում և՛ լի ժողովըդով:
Դաշտի մեջ բեմն որհասական:
Սյնտեղ ժըպտում և անվըրդով
Դահիճն ու սպասում դոհին,
Կամ խաղացնում և անագին
Մակըը ձեռքով իր սպիտակ
Կամ կառակում աննըպատակ՝
Ամբոխի հետ ուրախացող
Վողջը ձուլվեց մի շառաչող

Աղմուկի մեջ, կանացի ճիչ,
 Ծիծաղ ու հեծ, հիշոց կիզիչ:
 Հանկարծ հնչեց ազդու մի ձայն
 Ու վողջը պապանձվեց: Միայն
 Նրժույգների գովյունն եր գոռ
 Լքավում լռության մեջ զարհուր:
 Երբ ջապատված վարձու գորքով՝
 Պան գետմանն իր շքախմբով
 Քշում եր ձին իր սևաթույր:
 Մինչ այնտեղից, կեվի ճամփով
 Գալիս եր սայլը Տագնապով
 Բոլորը նայեցին այնտեղ:
 Խաղաղ, յերկնքի հետ հաշտված,
 Նստած եր կոչուրեյն անմեղ,
 Կողքին, անհոգ ու լուռ, Իսկրան,
 Բախտին հըլու՝ դառի նրման:
 Սայլը կանգնեց: Վորոտալիբ
 Աղոթքը հոգևոր հընչեց:
 Բարձրացավ խունկը բուրվառից:
 Ամբոխն անձայն խաչակնքեց
 Թշվառների հոգու համար,
 Նահատակներն ել՝ իրենց չար
 Վոստիսների: Ահա գնացին,
 Յելան: Ու խաչակնքելով

Խելագարվել եմ լիս հանկարծ,
Կամ դառանցում եմ:

ՄԱՅՐ

Տեր ընդ քեզ,—

Վոչ, դառացանք, յերազ չկա.
Դու չե՞ս լըսել մինչև հիմա.
Վոր հայրըդ, մոլեզնած դըստեր
Անպատվությամբ, չըդիմացավ,
Յնվ գետմանին մատնեց կայսեր՝
Դրդված վոխից արնածաբավ.
Վոր տանջանքում արյունահեղձ,
Նա ամոթով խոստովանեց
Սաղրանքն ու դավը խոլական,
Վոր զոհն արդար խիզախության
Գլխով տրված է վոսոխին.
Վոր յեթե աջն ահեղ վերին
Չառնի նըրան հովանու տակ,
Այսօր նըրան կգլխատեն
Զինվորական ժողովի դեմ.
Վոր նա նստած է դըժնդակ
Բանտի աշտարակում:

Մեկն ամբոխից ասալ նըրանց:
Այնտեղ քանդում են բնն արնոտ
Սեղանատ հոր աղոթքի տակ
Ու բարձրացնում են սայլի մոտ
Կաղնյա դագաղն յերկու կազակ:

Փախալ Մազեպն անեղ, մենակ,
Առաջն ընկած հեծյալների,
Արյան դաշտից: Մի ահռելի
Դատարկությամբ տանջվում եր նա:
Վոչ վոք նըրան մոտ չեր գալիս,
Նա չեր խոսում բոլորովին.
Փրփըրած սուրում եր նըրա ձին:
«Ո՞ւր ե Մարին».— Հասնելով տուն
Հարցրեց Մազեպը: Լսում ե նա
Պատասխաններ յերկչոտ, տրտում...
Յեվ սարսափով նա ակամա
Բացում ե դուռը սենյակի.
Սենյակը լուռ ե և ամա—
Նա խռովահույզ նետվեց այգին.
Բայց ընդարձակ լըճակի շուրջ
Մտվերներում խաղաղաշունչ
Թափուր ե, հետք իսպառ չկա—

Փախաւի—Կանչում ե նա իսկույն
Իրա մարդկանց հավատարիմ,
Իր քաջարի սերդյուկներին:
Նըրանք թըռան: Ձիու փնչոց,
Հետապնդման վայրենի դոչ—
Անդուլ սուբում են քաջ տղերք
Սըրաթըռիչ՝ ամենուրեք:

Վազում են թանգ ակնթարթներ,
Յետ չի գալիս Մարիան դեռ:
Վոչ վոք գիտեր. չկար մի լուր,
Ինչո՞ւ փախաւ նա, և ինչպէս:
Կրճտում էր ծեր Մազեպը լուռ:
Իր ծառաները տխրատես
Ու պապանձված՝ դողում էյին:
Պահած սրտում իր՝ թույնը կեզ՝
Մազեպը սենյակում փակվեց:
Անկողնի մոտ, մութ սենյակում
Նստած՝ նա աչքը չեր փակում
Տանջանքներով աներկրային:
Ձիավորներն առավոտջան
Մեկմեկ վերադառնում էյին:
Հոգնած էյին ձիերն՝ անչափ:

Սանձ, թամբակալ, սըթար, փորկապ—
Բողոքը փրփուրով պատված
Ջարդված էյին, արյունոտված:
Բայց վնչ վոք լուր բերեց նըրան
Սղջկա մասին թշվառական:
Յեղ հետքն անգամ իր գոյության
Կորով ինչպես դատարկ հրնչյուն,
Ու տաբաղիբ մայրն եր միայն
Կարիքն ու վիշտը ճաշակում:

ՅԵՐԳ. ՅԵՐՐՈՐԳ

Ձի խանդարում վիշտը խորին
Ուկրայնայի ղեկավարին՝
Հեռուն ձգտել հանդգնամետ:
Իր դիտումի մեջ աներեր,
Շարունակում ե կապը դեռ
Շվեդի հպարտ արքայի հետ:
Մինչդեռ, վոր անվրեպ խաբի
Կասկածանքի աչքերը չար,
Նա կարծեցյալ տառապանքի
Անկողնի մեջ տնքում ե հար,
Բըթիշկներից իր անհամար

Աղերսելով առողջութիւնն:
Վշտեր, ցաւեր ու ծերութիւնն,
Արգասիքները կըրքերի,
Պատերազմի ու հոգսերի,
Մահւան դաժան կարապետներ,
Նըրան վաղուց են զգետնել
Մահճին: Յեւ նա ունայն յերկրից
Պատրաստ է հեռանալ կարծես,
Ու կատարել սըբբազան ծես:
Հովվապետին է նա կանչում
Իր սուտ մահւան մահիճի մոտ
Յեւ ալիքներն իրա նենգոտ
Խորհրդավոր յուզով ոժում:

Որերն անցնում էյին: Մոսկվան
Զուր է սպասում ամեն վաչրկյան
Շվեդներին՝ նյութած թագուն,
Հին թշնամի դամբաններում,
Նըրանց համար հողեհանգիստ:
Կառլոսը դարձ մի կատարեց
Ու ուզմն Ուկրանյա փոխադրեց:

Յեւ որն հասաւ: Մահճից վոստնեց
Մաղիպն, այս տառապյալն անդոր:
Նա, վոր յերեկ դեռ՝ մահամիրձ,

Շիրիմի դըռան, անքում եր խոր:
Պոսրի վոսոխն ե նա ախոր:
Նա սյժըմ ժիր, գնդերի դեմ
Շողում ե աչքերով վըսեմ,
Յեվ սուր ե նա ճոճում կըրկին
Ու դեպի Դեանան քըշում ձին:
Այդպես այն կարդինալը կեղծ,
Ծըոված կյանքի ծերության տակ
Յերբ Հըռոմի խուչրով պսակվեց,
Դարձավ ջահել, հաղթահասակ:

Թըռավ համբավը թևերով,
Ու կրոնյան աղմըկեց խըռով,
«Նա անց կացավ, դավաճանեց,
Կառլի վոտքերի տակ դրեց
Հըլու բունչուկը»: Բոցափայլ
Ծաղեց արնոտ ու վիթխարի
Հրդեհը ժողովրդական
Պատերազմի:

Դժվար ե տալ
Զայրութը, հուրն ահեղ ցարի²⁶:
Թընդում ե նզովքը տաճարում

Պատուեց դահիճը ²⁷ Մաղեպայի
 Դիմապատկերն: Ու վեճերում
 Անդուսպ՝ աղմբկահուշող Ռհադայի
 Ուրիշ մի գեոման են ընտրում:
 Յենիսեցի խոսպան ավից
 Կոչուբեյի և Իսկրայի
 Ընտանիքները վըշտալից
 Պյասը կանչում ե իրեն քով:
 Նա նըբանց հեա արցունք հեղում,
 Նըբանց շոյում ե հեղեղում
 Յեվ նոր պատվով և բարիքով:
 Յասկոտ վասսիսը Մաղեպի,
 Ծերուկ Պալեյը — հեծվորն անահ,
 Սուրում ե աքոորից դեպի
 Յարի բանակն — Ուկրայինա:
 Լըքված ե բունտն արդեն անտեր,
 Կոճղի վըբա քաջի նըման
 Մեռնում ե Չեչեկն ²⁸ անվեհեր՝
 Զապոռոժի քաջ առաման:
 Յեվ դու, ընտբյալըդ ոաղմակահա
 Փառքի, սաղավարտի սիրուն
 Թաղը թողած, որհասդ ե արդ,
 Դու վերջապես տեսար հեռվում

Պոլտավայի պատերն հըպարտ:

Յեւ ջարը զորքն աշնտեղ նետեց:
Անցան գնդերն ինչպես մըրբիկ—
Յերկու բանակը դաշտի մեջ
Շուրջկալ արին իրար ճարպիկ:
Խիզախ մարտում հաճախ ջարդված,
Ու կանխորոք արյամբ հարբած,
Դիպչում ե, վերջապես, կըրկին
Ահեղ մարտիկը մարտիկին.
Տեսնում ե կառլը վըրդովված
Վոչ թե կույտերը խեղճ, ցրված,
Նարվյան փախըստականների,
Այլ գիծը գնդերի—փայլուն,
Արագընթաց, զգաստ, հըլու—
Յեւ շարքն անպարտ սըվինների:

Բայց նա վճռել ե անսասան—
Մարտն սկսել առավոտյան:
Քընած ե խոր բանակը Շվեդ:
Վըրաններից մեկում միայն
Զգուշ խոսում են իրար հետ:

«Վոչ, յես տեսնում եմ, Որլիկդ իմ,

Շտապեցինք մենք անտեղի,
 Հանդուգն ու վատ եր իմ հաշիվն
 Ու վոչ մի շահ մեզ չի բերի:
 Տեսնում եմ յես, կորած ե, արդ,
 Իմ նըպատակը: Ի՞նչ անել:
 Վրիպումը շատ ե մեծ. յես այդ
 Կառլի հանդեպ սըխարվեցի:
 Տըղա յե նա քաջ, առնացի.
 Հաջողությամբ, իհնրկե, նա
 Յերկու մարտ կ'սարքի,
 Նա անվեհեր կըսլանա
 Դեպի վոսոխն իր՝ ընթրիքի,²⁹
 Կարող ե նա նաև ուումբին
 Լոկ ծիծաղով պատասխանել.³⁰
 Ու գիշերով թագուն անցնել,
 Ռուս զինվորից ել անխափան,
 Բանակի մեջ թըշնամական.
 Ինչպես այսոր՝ վըռել գետին
 Կաղակին քաջ ու խոր վե՛րքին
 Խորունկ վերքով տալ պատասխան,³¹ —
 Բաց չնա չե, վոր պիտի կըռվի
 Ընդդեմ հսկա ինքնակալի:
 Ուղում ե բախար, զերթ վաշտեր,

Նա խաղացնել թըմբուկի տակ:
 Նա կուչր, համառ ե, անհամբեր,
 Թեթևամիտ, գոռոզ ու տաք:
 Աստված մեր բախտը գիտենա.
 Թշնամու նոր ուժերը նա
 Չափում ե իր փառքով անցած:
 Նա կըփշրի չեղջյուրն անդարձ:
 Ամոթ. ծեր հասակում տարվել
 Այս ոաղմական շրջմուխով:
 Նրա քաջությամբ խանդավառվել,
 Հարբել իր վաղանցուկ փառքով
 Զերթ ամոթխած աղջիկ:

ՈՐԼԻԿ

Կովին

Դեռ կսպասենք: Կարող ենք դեռ
 Պեսրոսի հետ խոսել կրկին.
 Դեռ կարելի չե վեճն հարթել:
 Կովում մեզնից լավ ջարդ կերած՝
 Կըհաշտվի ցարն անկասկած:

ՄԱԶԵՊԱ

Վոչ, ուչ ե: Ռուս թագավորին

Հընար չկա հաշտվել ինձ հետ,
 Վաղուց ե վըճըռված հավետ
 Ճակատագիրն իմ: Շատ ե հին
 Իմ վոխն այրող: Աղովի մոտ
 Յես մի անգամ մինչ առավոտ
 Նստած եյի խըրախճանքի
 Դաժան ցարի վըրանի տակ.
 Փըրվըռում եյին գինու թասեր
 Ու նըրանց հետ զըրույցը մեր:
 Խոսք նետեցի յես համարձակ:
 Զահել հյուրերը վախեցան —
 Նա, մոլեգնած, թասը նետեց
 Ու բըռնելով ծերունական
 Բեխերըս՝ ինձ թափահարեց:
 Այնժամ զսպած զայրույթս անզոր՝
 Յես ինձ տըվի վրեժի չերդում
 Յեվ այն կըրում եմ մինչ այսօր,
 Ինչպես վոր մայրը արգանդում
 Կըրում ե իր յերեխային:
 Հասել ե ժամն որհասային:
 Նա իմ մասին հուշեր, աչսպես,
 Պահպանելու յե մինչև վերջ:
 Նըրան պահված պատիժն եմ յես,

Փուշ եմ նըբա պսակի մեջ.

Կըտար սոհմիկ նա քաղաքներ,
Կյանքի ժամերը ցանկալի,
Վոր անցյալի նըման բռներ
Մաղեպայի բեխերն ելի:
Բայց կա դեռ հույս: Մեր բախտը դեռ
Վաղն արշալույսը կըվըճուի»:

Լըռեց: Փակում ե իր աչքերն
Այդ դավաճանը դուս ցարի:
Վառվեց այգի հըրդեհը նոր
Արդեն դաշտում, բլբի լանջին
Վունում ե ումբը: Մուգ բոսոր
Փարվում ե ծուխը յերկնքին
Առավոտյան շողերում ջինջ:
Գնդերը շարքը սեղմեցին:
Հըրաձիգներն յեկան ցրիվ
Թըփեթի մեջ: Արկը գոռում,
Սուլում են գընդակներն անթիվ
Ու սլաղ սվինները՝ կառկառվում:
Հաղթանակի սիրած վորդիք,
Շվեդներն, առաջ են նետվում ձիգ
Մարտկոցների կրակի միջով.

Ալեկոծվում ե այրուձին,
 Հետքովն իր՝ հետևակն ըշտապ,
 Յեվ, ծանրակուռ իր ամբուխյամբ,
 Ուժ ե տալիս նըրա դրոհին:
 Որհասական դաշտը մարտի
 Թնդում, վառվում ե բոցակեղ,
 Բայց ոաղմի բախտը՝ շեշտակի
 Արդեն ժպտալ ե սկսում մեզ:
 Գումարտակները, յետ նետված
 Համադարկով ու շրվիթված,
 Ընկնում են անդադար, ցրվում,
 Ռոզենն ե նահանջում նեղված,
 Ու Շլեպենբախն անձնատրվում:
 Շվեդին նեղում ենք մարտ առ մարտ,
 Խամբում ե դրոշն նրա հին փառքով,
 Յոգրաքանչյուր մեր քայլը, արդ,
 Սըրբազործում ե արնազարդ
 Ռաղմի աստվածն իր կընիքով:

Այնժամ վերից վոգեշընչված՝
 Կանչում ե Պյոտրը Թնդալից.
 «Ինպ գործը, տեր ընդմեղ»: Վրանից,
 Մոտիկներով շրջապատված,

Յեղնում ե նա: Աչքերը վառ
Ցոլում են: Դեմքն ե սարսելի:
Արագ են շարժումներն անան:
Նա գեղեցիկ ե, սքանչելի,
Աստվածային ամպրոպն ե նա:
Յեկավ: Նըրան նըժույգ տըվին:
Հանդարտ ե նժույգը ժիր, չեռուն:
Զգալով հուրն որհասային՝
Դողաց: Նա շեղ նայեց հեռուն
Ու թռավ ոաղմի փոշում խըռով—
Հըպարա՝ հըզոր իր հեծյալով:

Արդեն կեսոր ե: Տոթ ե կեղ
Հանգչում ե ոաղմն հնձվորի պես:
Այնտեղ սուբում ե մի կաղակ:
Գնդերն այտեղ մըտնում են շարք:
Լըոեց մուզիկը մարտական:
Բըլուրների վըրա, կարկամ,
Լըոեց մի պահ թնդանոթի
Մոունչը գոռ և անոթի:
Թնդացնելով դաշտն անսահման՝
Հեռվում ուռա վորոտացին.
Տեսան գնդերը Պեսոսին:

Գնդերի դեմ սուրում ե նա՛
 Հըպարտ ու յերջանիկ, դերթ մարտ:
 Աչքով լավում ե դաշտըն՝ անան:
 Իր յետեից անցան անպարտ
 Պյոսրի ճուտերը քաջարի—
 Բախտախաղում այս աշխարհի,
 Բաղմի գործում, պետության մեջ,
 Նըրա վորդիքն ու ընկերներ՝
 Շերեմեթեն ազնւիական,
 Յեվ Բըլնւը, Բոուը, Ռեպնին,
 Նաև բախտի այն սիրելին,
 Իշխանավորն ու կիսարքան:

Յեվ վիրավոր, գունատ, լըռին,
 Պատգարակում, հալատարիմ
 Ծառաների ուսին բազմած,
 Իր մարտական շոկատների
 Կապույտ տողանցների դիմաց
 Յերևաց Կառլը: Հերոսի
 Զորավարներն իր հեռ կչին:
 Թաղված եր նա խոհերում խոր:
 Շըլիոթ հայացքը անսովոր
 Մի խըռովմունք եր գըծագրում:

Յանկայլի մարտն ասես կառլին
 Տարակուսանք եր պատճառում...
 Յեզ նա ձեռքի թուլլ շարժումով
 Առաջ վարեց գընդերն իրա,
 Շարժեց առաջ ոռւսների վրա:
 Նրանց հետ դնդերը ցարական
 Ծլխում, դաշտում, իրար յեկան:
 Թընդաց Պոլտավյան մարտն ահեղ:
 Հըրի մեջ, թեժ կարկըտի տակ,
 Վորպես կենդանի ամբարտակ,
 Նոր շարքն ընկնող շարքերի տեղ
 Սեղմում ե սվին: Վորպես ամպրոպ՝
 Հեծյալ գընդերը քառատրոփ,
 Սուսեր, սանձեր զնգացնելով,
 Բաղխվում, հնձվում են խոլ թափով:
 Ռումբերը չուգունե չորս կողմ
 Պայթում, ցըրում, փորում են հողն
 Ու կխտելով դիերն անվերջ՝
 Թշշում արշան լըճերի մեջ:
 Շվեդ, ոռւս, խոցում ե խոր, թրատում,
 Թըմբուկ ե, կանչ ե կըռճըտյուն,
 Վորտաը թնդանոթների,
 Զիու գոփյուն, խրխինջ, տնքոց,

Ամեն կողմ մահ, դըժոխք ու բոց:

Տաղնապներում այդ խուլ, լխըռուլ,
Ներշնչումի հայացքներով,
Զորավարները սառնագին
Նայում են ճակատամարտին,
Մարտաշարժերն անդուլ դիտում,
Կռահում կորուստ ու հաղթություն
Յեւ իրար հետ խոսում կամաց:
Բայց ուսսական արքայի մոտ
Ո՞վ է ուզմիկն այն տարիքոտ:
Յերկու կազակներին հենված,
Բորբոքվելով սրտով կըրքոտ,
Նա հերոսի վարժ աչքերով
Դիտում է ուզմը մեծախառով:
Այլևըս չի նստի նա ձի,
Նա դառամել է աքսորում
Յեւ կազակները բոցարյուն
Եւ Պալեյի աղաղակից
Ամեն կողմից չեն հավաքվի:
Բայց ե՞ր աչքերը փայլեցին
Ու դայրույթի գիշեր մթին
Ծածկեց նըրա ճակատը ծեր:

Ի՞նչը նըրան, արդ, կըհուզեր:
Գուցե տեսալ ռազմի բոցում
Նա Մաղեպլին իր թշնամի,
Յեւ իր տարի՞քն ե անիծում
Այդ զինազուրկը ծերունի:

Մաղեպը խոհերում սուզված՝
Մարտն եր դիտում՝ շրջապատված
Խըռովարար կազակների,
Ավագների, սերդյուկների
Ու հարազատների խմբով:
Կրակոց պայթեց հանկարծակի,
Ու յետ դարձաւ Մաղեպը ծեր:
Վայնարովսկու ձեռքի մեջ դեռ
Ծըխում եր փողը մուսկետի:
Մի քիչ այն կողմ ընկած դետին
Ջահել կազակն եր արյան մեջ,
Իսկ ձին, փոշոտ ու փրփրած,
Վայրախըխինջ, հեռուն սուրաց
Կըրակների միջով անշեջ:
Գալիս եր Մաղեպի վըրա
Կազակը՝ սուրը մերկ ձեռքում,
Աչքերում խենթ կատաղություն:

Ծերուկը մոտ քշեց նըրան,
 Հարցեր տըվեց: Սակայն կազակն
 Արդեն փըշում եր շունչը տաք:
 Մարվող տեսքով սպառնում եր դև
 Նա Ռուսիայի նենգ թշնամուն.
 Մըռայլ եր դեմքը մահամուժ
 Յեվ Մարիի անունն անուշ
 Հաղիվ եր թոթովում լեզուն:
 Բայց մոտ ե ժամը հաղթության,
 Ուռն, շվեդները նեղն ընկան
 Ո՛ր, վեհ վաչքկյան, ո՛ր, վեհ սլասկեր,
 Կրկին հարված մի անվեհեր—
 Արդեն փախչում ե թշնամին.³²
 Յեվ յետևից—մեր անբուձին:
 Թըրերն են ջարդելով ծովում:
 Դաշտում գիերը փովեցին,
 Ինչպես մորեխն ե սև փովում:

Նստած ե Պյոտրը խնճուղքի:
 Հըստարտ ե, սլարդ ե և փառքով
 Լիքն ե հայացքն իր անսասան:
 Յեվ գեղեցիկ ե, հողեթով
 Նըրա խընճուղքն արքայական:

Նա իր զորքի կանչերի տակ
Հյուրասիրում և մեծաբար
Յեզր զորավարներին իր հին,
Յեզր զորավարներին ոտար,
Գրգվում և վեհ գերիներին
Ու բարձրացնում թասեր փրփրած
Իր մեծ վարպետների կենաց:

Բայց ո՞ւր և հյուրը առաջին
Յեզր ուսուցիչն անեզ մեր անն,
Վորի հանդգնությունը հին
Փշրեց հազթողը Պոլտավյան:
Յեզր ո՞ւր և նա, Մազեպը նենդ,
Ո՞ւր և փախել Հուդան, չկա:
Ե՞ր չե արքան հյուրերի մեջ
Ու դավաճանը կոճղի վրա: ²³

Սուրում և մերկ ստեպներով
Կառլոսի հետ Մազեպը ծեր:
Փախչում են: Նույն ճակատագրով
Նըրանք իրար են միացել:
Մոտիկ վըտանդ, կատաղություն
Արքային ույժ են ներշնչում:
Նա ծանրը վերքն իր մոռացավ:
Գըլուխը կախ սուրում և ձիգ

Նա՛ հալածված ոռւս բանակից,
Հավատարիմ նրա մարդիկ
Հազիվ հասնում են յետևից:

Հառած հայացքը վորպես նետ
Ստեպի անծայր հեռուներին՝
Ծերուկ Մա...եպը նըրա հետ
Ասպանդակու ե շտապ իր ձին
Դեմից մի ագալ, կ եր... ի՞նչ,
Մաղեպը մի՞թե վախեցավ:
Ինչո՞ւ արագ նա սլացավ
Ագարակի մոտից հեռուն:
Գուցե աչդ բակը և այդ տունն
Ու այդ այգին ամայացած
Յե՛վ դուռը բաց խոպան դաշտում
Նըրան ինչ վոր վաղուց անցած
Մի պատմութ՛յո՞ւն են հիշեցնում:
Դահլիճը սուրբ անմեղութ՛յան,
Ճանաչեցի՞ր պատկերն այս տան,
Այս տան, յերբեմըն մեծանուն,
Ուր դու սիրով, գինով հարբած,
Յերջանկութ՛յամբ շրջապատված,
Ուրախ կատակ եյիր անում:

Ճանաչեցի՞ր սուրբ ոթեանն,
Ուր այն հրեշտակն եր անբասիր,
Այգին, յերբ մուտք գիշերում այն
Դու ստեպ տարար... ճանաչեցիր:

Գիշերն ստեպն ահա ստվերեց:
Կապուտաջուր Դնեսպրի ափին,
Խավարաշուք ժայռերի մեջ,
Սթափ հանձնըվել են մըրափին
Թշնամիները Պետրոսի:
Խաղաղ հանգիստը հերոսի
Չեն խանգարում խոհերը: Նա
Պոլտավյան ջարդը մոռացավ:
Սակայն շրփոթ ե, չարադավ
Մազեպի քունը: Անխընա
Տանջում ե նրան մըռայլ հոգին:
Հանկարծ խավար լըռության մեջ
Նըրան կանչում են: Նա զարթնեց:
Նայում ե: Մատը թափ տալով
Մեկը հակվել ե իր վըրա:
Ցնցվեց, կարծես կացնի ահով...
Մազեպի դեմ, մազերը բաց,
Փայլուն աչքերը ներս ընկած,

Քուրձերի մեջ, նիհար, գունատ,
լուսնի լույսով կանգնած և նա...
«Դո՞ւցե չերազ ե... դո՞ւ... Մարի»:

ՄԱՐԻԱ.

Ա՛խ, լ՛ուռ կաց, լուռ, հողիս, հենց
նոր
փակվեց աչքերն իմ հորն ու մոր...
կաց... կլքսեն մեզ—մի անի:

ՄԱՋԵՊ

Մարի, ուշքի յեկ, խեղճ աղջիկ,
Աստված իմ... Ումն հմ տեսնում, սևմ:

ՄԱՐԻԱ.

Լքսիր. ի՛նչ խորամանկ մ արդիկ
Ծիծաղելի բան են սլատմում:
Իբրև գաղտնիք, նա ինձ սլատմեց.
Թե մահացել ե հաչրըս խեղճ.
Յեզ ցուլց տվավ նա ինձ կամաց
Ճերմակ գլուխը—տե՛ր աստված,
Բամբասանքից ել հւր փախչել,

Այդ գըլուխը, լըսում ես ինձ,
Իսկի մարդու գըլուխ ել չեր,
Գայլի գըլուխ եր, ան թե ինչ:
Ինչո՞վ եր ինձ խափում այդպես.
Տանջում առանց ամաչելու:
Յե՛վ ի՛նչ նըպատակով, վոր յես
Չըփախչելի՛ր քեզ հետ: Ինչո՞ւ:
Լըսում եր խոր վըշտով նըբան
Իր սիրեկանը ծեր, դաժան:
Բայց մտքերի փոթորկի մեջ
Մոտում եր նա. «Համենայն դեպս՝
Հիշում եմ դաշտը... տոնը մեծ...
Ամբոխ... յերկու մեռած մարմին...
Յե՛վ մայրըս ինձ տարավ հանդես...
Ո՛ւր եյիր դու... Գեղնից բաժան
Ի՞նչ եմ շրջում յես կես գիշեր:
Տուն գընանք: Մութ ե, անազան:
Տեսնում եմ, անխ, գըլուխս դեռ
Դատարկ հուզումներով ե լի.
Յես քեզ ուրիշի տեղ գրի,
Մերուկ: Ինձ թող: Հայացքըդ նենդ
Ու ծաղրական ե, ահադդիկ:
Հապխտ ես դու: Նա՛՝ գեղեցիկ.

Նրա անքերում փայլում է սեր,
Նրա խոսքերը մեղմ են, տաք,
Բեխեր ունի ձյունից ճերմակ,
Քոնին՝ արյունն է չորացել»:

Յեւ ծիծաղեց վայրի ճիչով,
Յեւ դեռատի վիթից թեթև,
Թըռավ, փախավ թռչկոտելով
Ու չըքացավ գիշերում սև:


Հարվում եր մութը Այգն եր ալ:
Բոցն սկսել եր թեժանալ:
Կազակն եր աչք ցորեն խաշում.
Դնեպրի ափին թիկնապահներն
Արդեն ձիերն են լողացնում:
Կառլը զարթնեց, «Ոհ, ժամ է, վեր,
Զարթնիր, Մադեպա, Լուսացավ:
Մակայն վաղուց է նա արթուն,
Նրան ուտում են վիշտ ու ցավ,
Շունչը խեղդված է կոկորդում:
Յեւ նա թամբում է լուռ իր ձին,
Սուբում փախչող արքայի հետ:
Նրա անքերը փայլեցին
Զարհուրելի բոցով, յերբ նա

Տըվալ հրաժեշտն իրա վերջին
Իր հայրենի յեզերքներին:

Անցալ մի դար — և ի՞նչ մընաց
Հըզոր, հըպարտ այդ այրերից,
Կամքով լեցուն այդ կրքերից:
Նըրանց սերունդն անցալ անդարձ —
Նաև հետքերն անհետացան
Արնոտ գործի ու հաղթության:
Յեվ հյուսիսի պետության մեջ,
Նըրա բախտի մեջ մարտական,
Բարձրացըրիր արձանըդ մեծ
Լոկ դու, հերոսըդ Պոլտավյան:
Յեվ այն չեբկրում, ուր թևավոր
Շարքերը հողմաղացների
Խաղաղ պատով են պաշարում
Խոպան պատնեշը Բենդերի,
Ուր գոմեշներն են թափառում
Այն ռազմական թմբերի շուրջ —
Ավերակները տրամաշունչ
Մի խորտակված տաղավարի,
Յերեք մամոտ աստիճաններ
Հողում թաղված, պատմում են դեռ

Համբավը շվեդ թագավորի:
Ուր յետ մղեց հերոսն այն խենթ,
Իր տընային ծառաների
Ամբոխի մեջ ինքը մենակ,
Հուժկու գըրոհը թուրքերի,
Ու նետեց թուրը բունչուկի սակ:
Յեկվորն այնտեղ գուր պիտ հիմի
Փնտուի դամբանը գետմանի—
Նա չի հիշվում վաղուց ի վեր,
Միայն սրբոց հանդեսներում
Նըրան նըզովք են վորոտում
Տաճարներից—տարին մի հեղ:
Բայց այն դամբանը կա, վորտեղ
Ննջում են աճյունները սառն
Յերկու անմեղ նահատակի.
Պատսպարեց նըրանց հոգին
Յեկեղեցին սիրողաբար ³⁴
Շիրիմների շարքում արդար:
Դիկանկայում ծաղկում է հին
Կաղնիների շարքը հսկա,
Բարեկամի ձեռքով տընկած,
Նըրանք պատմում են թոռներին
Նահատակված նախորդների

Մասին: Բայց դուստրը հանցավոր...
Ավանդությունը իր մասին
Լըռում ե: Իր տառապադին
Վիճակը, վերջը ահավոր
Վարագուրված են մեղանից
Թանձր մութով: Մեկ-մեկ միայն
Աշուղը կույր ուկրայնական
Յերբ գյուղական համայնքի մեջ
Գետմանի յերգն ե ծլնկում,
Այդ մեղապարտ աղջկա մասին
Հարևանցի խոսք ե նետում
Կազակ ջահել աղջիկներին:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Վասիլի Լեոնտյեվիչ Կոչուբեյ, գլխավոր դատաւոր, այժմյան կոմսերի նախնիքներից մեկը:

2 ХУТОР (աղարակ) — քաղաքամերձ տուն:

3 Կոչուբեյն ուներ մի քանի աղջիկ. նրանցից մեկն ամուսնացած էր Մազեպայի քեռորդի Որբիդովսկու հետ: Նա, վորի մասին այստեղ հիշատակվում է, կոչվում էր Մատրյոնա:

4 Մազեպան իրոք ուզել էր իր սանուհուն, բայց մերժում ստացել:

5 Ավանդությունը Մազեպային է վերագրում մի քանի յերգեր, վորոնք մինչև այժմ մնացել են ժողովրդի հիշողության մեջ: Կոչուբեյն իր ամբաստանազրի մեջ նույնպես հիշատակում է հայրենասիրական մի տաղերգություն (դուժա), վոր իբր թե հորինել էր Մազեպան: Այդ տաղը նշանավոր է վոչ միայն պատմական տեսակետից:

6 Բունչուկ և բուլավա (դրոշակ և գուրջ) — դեմամանական աստիճանի նշաններ են:

7 Տես Բայրոնի Մազեպան:

8 Գորոշենկո, հին Մալոուսիայի հերոսներից մեկը
ուռսական տիրապետութեան անհաշտ թշնամիներ:

9 Գրիգորի Սամոյլովիչ, Պետրոս I-ի թագավորու-
թեան սկզբում Սիբիր աքսորված գեամանի վորդին:

10 Սիմյոն Պալեյ, խմբագրության գնդապետ, քաջ
ձիավոր. ինքնագլուխ ասպատակութեաններէ հա-
մար աքսորված եր Յենչսեյսկ՝ Մազեպայի գանգա-
տով: Յերբ վերջինս դավաճան դուրս յիկավ, ապա
Պալեյը նույնպես, իբրև նրա վաղուցվա թշնամին,
հետ կանչվեց աքսորից և ներկա գտնվեց Պուտա-
վայի ճակատամարտում:

11 Կոստյա Գորգեյենկո, զապորոժեան կողակնե-
րի բանակապետ (КОШЕВОЙ) ատաման: Հետագայում
անձնատուր յեղավ Կարլ XII-ին: Գերի վերցվեց և
գլխատվեց 1708 թ.:

12 20,000 կողակներ ուղարկվել էին Լիֆլանդիա:

13 Մազեպան մի նամակում կշտամբում և Կոչու-
բեյին այն բանի համար, վոր նրան կառավարում է
էր կինը, հսլարս և բարձրամիտ:

14 Իսկրա, պոլտավյան գնդապետ, Կոչուբեյի ըն-
կերը, նրա համախոհը և բախտակիցը:

15 Յեզուիտ (ճիզվիտ) Զալենսկի, իշխանուհի Գու-
լ'սկայա և ինչ վոր բուլղարացի արքեպիսկոպոս,
իր հայրենիքից աքսորված, Մազեպայի դավաճանու-
թեան գլխավոր գործակալներն էին: Վերջինս
մուրացկանի կերպարանքով յերթևեկում եր Լեհաս-
տանից Ուկրաինա:

16 Այսպես էին կոչվում գեամանների հրովար-
տակները:

17 Յիլիպ Ուլիկ, գլխավոր գրագիր, Մազեպայի մտերիմ խորհրդականը, վերջինիս մահից հետո (1710) Կարլ XII-ից ստացավ մալոռոսական դեոմանի դատարկ տիտղոսը: Հետագայում ընդունեց մահմեդական հավատը և մեռավ Բինդերում մոտ 1736 թվին:

18 Բուլավին, Դոնի կազակ, վորն ըմբոստացել էր մոտավորապես այդ ժամանակ:

19 Գաղտնի քարտուղար Շաֆիրով և կոմս Գոլովկին, Մազեպայի բարեկամներն ու հովանավորները. նրանց վրա պետք է ընկնի, ըստ արդարության, ամբաստանողների դատի և մահապատժի սարսափը:

20 1705 թվին: Տես. Բ. Կամենսկու Մալոռոսիայի պատմության ծանոթությունները:

21 Ղրիմի վրա կատարված անհաջող արշավանքի ժամանակ, Կազի-Գիրեյը առաջարկեց նրան միանալ իրեն և միատեղ հարձակվել ռուսական զորքի վրա:

22 Իր նամակներում նա գտնգատվում էր, թե ամբաստանողներին խիստ թեթև են տանջել և անդադար պահանջում էր նրանց մահապատժը, համեմատում էր իրեն Սուլաննայի հետ, վորին անմեղ տեղ զրպարտել էյին անորեն ձերուհիները, իսկ կոմս Գոլովկինին՝ Գանիել մարգարեյի հետ:

23 Կոչուբեյի գյուղը:

24 Արդեն մահվան դատապարտված Կոչուբեյը տանջանքի յեր յենթարկվել դեոմանի զորամասում: Թշվառի պատասխաններից յերևում է, վոր նրան հարցաքննել են իր թագցրած գանձի մասին:

25 Գետամանական զորքը (сердюки) պահվում էր գետամանների սեփական ծախքով:

26 Իր սովորական արագությամբ և յեռանդով Պետրոսի ձեռք առած ուժեղ միջոցները Ուկրաինային պահեցին հնազանդության մեջ:

« 1708 թ. նոյեմբերի 7-ին, Թագավորի Հրովարտակով, կազակներն իրենց սովորության համաձայն ազատ ձայներով գետման ընտրեցին՝ ստարոդուրյան դնդապետ Իվ. Սկորոպադսկուն:

« Ամսի 8-ին Գլուխով յեկան Կիևի, Չերնիգովի և Պրեյասլավի արքեպիսկոպոսները:

« Իսկ 9-ին նույն ավագերեցները հրապարակով, նդովեցին Մազեպային, միևնույն որը այդ դավաճան Մազեպայի պերսոնը (խրտվիրակը) դուրս բերին և հանեցին ասպետական նշանը (վորը հաղթրած էր այդ խրտվիրակի վրա ժապավենով) հիշյալ պերսոնը նետեցին դահճի ձեռքը, դահիճը վերցնելով այն և կապելով պարանից, քաշ տվեց փողոցով և հրապարակով՝ նույնիսկ մինչև կախազանը և հետո կախեցին:

« Գլուխովում իսկ ամսի 10-ին մահապատժի յենթարկեցին Չեչելին և մյուս դավաճաններին...» (Պետրոս Մեծի որագիրը):

27 մարտոսական բառ (каш) - դահիճ:

28 Չեչելը կայազորին պաշտպանեց Բատուրինին իշխան Մենշիկովի զորքերի դեմ:

29 Դրեզդեն՝ Ավգուստ Թագավորի մոտ. Տես Voltaire Hist. de Charles XII.

30 — Ահ, ձերդ մեծությունն, ուումբ... — Երանչ ընդ-
հանուր բան կա ուումբի և նամակի միջև, վոր քեզ
Թելադրում եմ, գրիր՝ Այդ պատահել ե ավելի հետո:

31 Գիշերով Կարլը անձամբ մեր բանակատեղը դի-
տելիս, հանկարծակի հանդիպեց կրակի շուրջը նըս-
տած կազակներին: Նա ձին քշեց ուղիղ նրանց մոտ
և կրակելով նրանցից մեկին սեփական ձեռքով ըս-
պանեց: Կազակները յերեք անգամ կրակ բաց արին
նրա վրա և վոտքից խիստ վիրավորեցին:

32 Իշխ. Մենշիկովի հիանալի կարգադրություն-
ների և զործողությունների շնորհիվ ճակատամար-
տի բախտը վորոշվում եր նախապես: Կռիվը տեեց
հազիվ յերկու ժամ: Վորովհետև (ասված ե Պետրոս
Մեծի որագրում) անպարտելի պարուն Եվդոները Եու-
սով իրենց կոնակը ցույց սլին, յեվ մեր զորեերից
բեհամու վողջ բանակը ջախջախվեց: Պետրոսը հետա-
դայում շատ բան ներեց Դաւնիլիչին¹ այն ծառայու-
թյունների համար, վոր մատուցել եր այդ որը դե-
ներալ իշխ. Մենշիկովը:

33 L'Empereur Moscovite pénétre d'une joie qu'il ne
se mettait pas en peine de dissimuler (կային և ու-
րախանալու պատճառներ) recevait sur le champ de
bataille les prisonniers qu'on lui amenait en foule
et demandait á tout moment: où est donc mon
frère Charles?

... Alors prenant un verre de vin: A la santé,

1. < Մենշիկովի հայրանուն >.

dit—il, de mes maîtres dans l'art de la guerre!—
Renschild lui demanda: qui étaient ceux qu'il
honorait d'un si beau titre. «Vous, Messieurs les
généraux Suedois», reprit le Czar.—Votre Majesté
est donc bien ingrate, reprit le Comte, d'avoir tant
maltraité ses maîtres.¹

34 Իսկրայի և Կոչուբեյի դիւսաւած մարմինները
հանձնվեցին ազդակահաններին և թաղվեցին Կիեւի վան-
քում. նրանց գերեզմանի վրա քանդակված է հետե-
յալ տապանադիրը.

«Ո՛վ անցորդ, վոր չդիտես, թէ ում աճյունն է
այստեղ թաղված, քանի վոր տանջանքն ու մահը
հարկադրել են մեզ լուռ մնալ, այս քարը լեզու
կառնի և կհայտնի քեզ. և հանուն ճշմարտութեան և
հավատարմութեան առ մեր միապետը լմպեցինք,

1 < Մոսկովյան կայսրը, լցված մի ուրախութեամբ
վոր նա չէր ջանում թագցնել, ուղամադաշտի վրա
ընդունում էր գերիներին, վորոնց խմբովին բերում
էին նրա մոտ, և ամեն բոպէ հարցնում էր. «Իսկ
ո՞ւր է իմ յեղբայր Կարլը»

. Ս,յն ժամանակ բարձրացնելով գինու բաժա-
կը, նա ասաց. «Մտադմական արվեստի մեջ իմ ու-
սուցիչները կենացը: Ռենշիլդը հարցրեց նրան.
այդ գեղեցիկ տխրոսով ո՞ւմն է նա մեծարում: «Ձեզ,
պարոն շվեդացի դէներալներ»—պատասխանեց ցարը:
—Ուրեմն, ասաց կոմսը, ձերդ մեծութեանը շատ
յերախտամուռ է իր ուսուցիչները հետ այդքան վատ
վարվելու համար» >

չարչարանաց և մահու բաժակը, Մագեդայի շարա-
գործությամբ, մենք հավետ արդար, կացնով գլխատ-
ված, հանգչում ենք սույն այս վայրում Տիրամոր,
վորը պարգևում և իր ծառաներին կյանք հավիտե-
նական:

1708 թվականի հուլիս ամսի 15-ին, զորաց բա-
նակատեղում, Բելայա ցերկովից այն կողմը՝ Բորշ-
չագովեցում և Կովչեվոյում, գլխատվեցին՝ ազնվա-
տոհմ Վասիլի Կոչուբեյը, գլխավոր դատավոր, Իոանն
Իսկրան, Պուտայան գնդապետ: Իսկ նրանց մարմին-
ները հուլիսի 17-ին բերվեցին Կիեվ և նույն օրը
Սրբուհի Պեչերսկայայի մենաստանում թաղվեցին
սույն այս վայրում»:

«Պուտավա» պոեմը դրված և 1828 թ. հոկտեմբե-
րին կարճ ժամանակում: Պոեմի առաջին հրատարա-
կությունն (1829 թ.) ուներ հետևյալ առջաբանը.

«Պուտավայի ճակատամարտը Պետրոս Մեծի թա-
ղավորության ամենից կարևոր և ամենից բարե-
բախտ իրադարձություններից մեկն է: Նա ազատեց
նրան ամենավտանգավոր թշնամուց, ամրապնդեց
ուսական տիրապետությունը հարավում. ապահո-
վեց նոր հիմնարկությունները հյուսիսում, և պե-
տությանն ապացուցեց ցարի կատարած բարեփո-
խության հաջողությունն ու անհրաժեշտությունը:

Շվեդական թագավորի սխալն առածի կարգ և ան-
ցել: Նրան մեղադրում են անդառնչության համար,
Ուկրաինայի վրա նրա կատարած արշավանքը հա-


մարում են անխելքություն: Քննադատներին չես դոհացնի, մանավանդ ձախողությունից հետո: Մակայն և այնպես Կարլը այդ արշավանքով խուսափեց նապոլեոնի փառավոր սխալից. նա չքայլեց Մոսկվայի վրա: Յեղ կարող էր արդյոք նա սպասել, վոր միշտ անհանգիստ Մալոռոսիան չի վողբվորվի իր գետմանի որինակով և չի ըմբոստանա Պետրոսի քնն առաջվա տիրապետութեան դեմ, վոր Լեվին Հառուպը յերեք որ իրար վրա կջախջախվի, վոր վերջապես 25 հ. շվեդներ, իրենց թագավորի առաջնորդութեամբ, կփախչեն նարվայի փախստականներէ առաջ: Պետրոսն ինքն յերկար տատանվում էր, խուսափելով դիտավոր մարտից՝ վառվես չափազանց վանգավոր գործի: Այս արշավանքում Կարլ XII-ը ավելի սրկասքան յերբեք վատահում էր իր բախտին. սա անղի տվեց Պետրոսի հանճարին:

Մագեպան այդ դարաշրջանի ամենանշանավոր դեմքերից մեկն է: Գրողներից վումանք ուղեցին դարձնել նրան ազատութեան հերոս, նոր Բողդան Խմելից կի: Պատմությունը նրան ներկայացնում է նենգություններէ և չարագործություններէ մեջ յեփված փառասեր, իր բարերար Սամոյլովիչի զրպարտիչը, իր անբախտ սիրուհու հոր կորստյան սպառնալոր, Պետրոսի դավաճանը նրա հաղթանակից առաջ, Կարլի դավաճանը նրա պարտութեանից հետո. յեկեղեցու կողմից նզովված նրա հիշատակը չեր կարող խուսափել և մարդկութեան անեծքից:

Մեկը ռոմանտիկական վեպիկում Մագեպային

պատկերել ե վորպես վախկոտ ծերունի, վորը գու-
նատվում ե զինված կնոջ դիմաց, հնարում ե նրբա-
ցած արհավիրքներ, վորոնք պիտանի յեն Ֆրանսի-
ական մեյոդրամայում, և այլն: Ավելի լավ կլիներ
զարգացնել և բացատրել խոտվարար գետմանի իս-
կական խարակտերը, առանց քմահաճորեն աղավա-
ղելու պատմական դեմքը:

1829 թ. հունվարի 31. >



Քարգմանեց՝ ն ա յ ի ը ի Ջ ա ը յ ա ն

Պատ. խմբագիր՝

Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան

Սրբագրիչ՝ Ա. Արզաբանյան

Գլխավոր լրագրիչ Գ— 404

Հրատ. 3005, դլավ. լրագ. պատվեր 172, տիրած 3000

Հանձնված և արտադր. 27 հունվարի, 1937 թ.

Ստորագրված և տպագրության 10 փետրվարի, 1937 թ.

Պետհրատի տպարան, Յերեվան, Ս Կնունյանցի, 4

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037798

803

ՊՆԸ Զ Ռ
ԿՐՄ 1 Ռ

A ^I 3510

ԿԿԿ
զրնսնկ